

«Եթէ Կարենաս»

Պիտի ուզէի այս աշխարհիս մէջ տեսնել ոյժ մը, որ կարենար
բնաջնջել՝ այս փոքր, ու ո՛չ կարելոր ցե՛ղը, ա՛զգը, որուն կառուցուածքները
փլած են, որուն գրականութիւնը կը մնայ անտեսուած, որուն
երաժշտութիւնը չի լսուիր, եւ որուն աղօթքները կը մնան անպատասխան:
Դէ՛, գնա՛, փճացո՛ւր այս ցեղը. Տապալէ՛ հայաստանը: Տե՛ս, թէ պիտի
կարենա՞ս: Վտարէ՛ զիրենք իրենց օճախներէն դէպի անապատ՝ առանց
հացի եւ առանց ջուրի: Այրէ՛, հրկիզէ՛ անոնց տուներն ու եկեղեցիները:
Ապա տե՛ս, թէ դարձեալ պիտի չխնդա՞ն, տե՛ս, թէ կրկին պիտի չապրի՞ն.
Տե՛ս , թէ կրկին պիտի չերգե՞ն, տե՛ս, թէ կրկին պիտի չաղօթե՞ն: Տե՛ս, թէ
ինչպէս պիտի խնդան ու խօսին իրենց մայրենի լեզուով: Վասն զի, երբ
անոնցմէ երկու հոգի իրարու հանդիպին, աշխարհիս որեւէ անկիւնը ու
խօսակցին, տե՛ս, թէ անոնք ինչպէս պիտի ստեղծեն Նոր Հայաստան մը:

ՌԼԻԽԻՄ ՍԱՐՈՅԵԱՆ